Խորհրդի նիստեր

Հաշմանդամների հարցերով զբաղվող խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերին առանձին դեպքերում կարող են հրավիրվել պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նիստերը վարում է ՀՀ վարչապետը: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նիստերը կարող է վարել նաեւ խորհրդի աշխատանքները համակարգողը:

2006թ. նոյեմբերի 21-ին տեղի է ունեցել խորհրդի առաջին նիստը, որը, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, վարել է խորհրդի աշխատանքները համակարգող, ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետը:

Խորհուրդը քննարկել է հաշմանդամների հարցերով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ ՀՀ վարչապետի 2006թ. սեպտեմբերին կայացած հանդիպման ժամանակ տրված հանձնարարականների կատարման ընթացքը: Զեկուցվել է, որ ի կատարումն այդ հանձնարարականների, մասնավորապես, ՀՀ 2007թ. պետական բյուջեում 10 մլն դրամ է նախատեսվել 2008թ. Պեկինում կայանալիք միջազգային պարալիմպիկ մրցումներին հայկական թիմի նախապատրաստման եւ մասնակցության ֆինանսավորման նպատակով: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, գիտության եւ կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի, տրանսպորտի եւ կապի նախարարներին տրված հանձնարարականների համաձայն, վերջիններիս կողմից տեղեկանքներ եւ առաջարկություններ են ներկայացվել հաշմանդամների զբաղվածությանը վերաբերող օրենսդրության, 18 տարին լրացած, սակայն խնամողի կարիք ունեցող մանկուց հաշմանդամների խնամողներին ֆինանսական աջակցության տրամադրման, հաշմանդամների տեղափոխման համար տրանսպորտային միջոցների հարմարեցման, Երեւանի թույլ լսող երեխաների հատուկ դպրոցում լինգաֆոնային դասարանի կահավորման ֆինանսավորման վերաբերյալ: Տեղեկացվել է, որ նշված գործառույթների իրականացումը ներկայումս ընթացքի մեջ է:

Խորհուրդը քննարկել է նաեւ կազմակերպչական հարցեր: Հանձնարարվել է խորհրդի անդամներին՝ առաջարկություններ ներկայացնել խորհրդի ստեղծման մասին ՀՀ վարչապետի որոշման մեջ նշված հիմնական խնդիրներից եւ գործառույթներից բխող աշխատանքային խմբերի, ինչպես նաեւ հաշմանդամների աջակցության հիմնադրամի ստեղծման նպատակով աշխատանքային խմբի ձեւավորման եւ խորհրդի տարեկան ծրագրի նախագծի վերաբերյալ: